ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **30/08/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սիմոն Բաբայանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ՝ Սամվել Իխտիարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 30-ի թվով 11-րդ արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին/զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի Գոմք բնակավայրի 3-րդ փողոց, 16/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.69261 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:

3.Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող, արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շինարարական աշխատանքներին խոչնդոտող ծառերը և թփերը հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
4.ԳՄՀԸ-ի կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Վայք համայնքի հայտը հաստատելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով՝

1.Վայք համայնքի Գոմք բնակավայրի 3-րդ փողոց, 16/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.69261 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ հանրակրթական դպրոց կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ԵՎ ԹՓԵՐԸ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել հատել Վայք համայնքի Սարավան բնակավայրի 8-րդ փողոց, 2/1 հասցեի, «Էլիտ Քնսթրաքշն» ՍՊԸ-ին պատկանող հողամասում գտնվող ծառերը և թփերը (շլորենի, տանձենի, ալոճենի և մասրենի), քանի որ խանգարում են արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շինարարական աշխատանքներին:

2.Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել Վայք համայնքի սոցիալապես անապահով և Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին
ԳՄՀԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ)կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին:

2. Համաձայնություն տալ համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 20% համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի Բաժին 1-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Ավագանու անդամներ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Սամվել Իխտիարյանը

_____